

# Արմինե Մուրադյան

Բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ

## Ազգային բնավորության նկարագիրը Ալաջաջյանի փոքր արձակում

Մեր ազգային պատկանելիությունը  
մեզ պարտավորեցնում է ծառայելու  
ազգին, մեկս զենքով, մեկս գրչով, մեկս  
ձեռներեցությամբ, չորրորդը՝ խելքով:  
Ամեն մեկս մեզ տրված շնորհքի չափով  
ու մեր սրտի թելադրանքով...

Ստեփան Ալաջաջյան

Ստեղծագործական որոնումները գրական մուտքից սկսած Ստեփան Ալաջաջյանին տարան մարդկային բարդ փոխհարաբերությունների, բարոյահոգեբանական վերլուծությունների փնտրտուքների ճանապարհով: Արձակի նոր որոնումների մեջ գրողը փորձում էր հայտնագործել իր աշխարհը, ասելիքն ու ոճը, թափանցել մարդու ներաշխարհի գաղտնի էլեմենտների խորքերը, պատկերել հոգեկան տառապանքների ու ցավի, կարոտի ու սպասման անբացատրելի կողմերը:

Նրա արձակը, որը սկիզբ առավ «Կետը» պատմվածքից և ընդգրկվեց տարվա լավագույն պատմվածաշարի հավաքածուում, իր պարզությամբ, երևույթների գնահատման նոր մոտեցումներով, եվրոպական դասական գրականությանը հոգեհարազատ անպաճույճ ոճով, խայտաբղետ գույներով ու երանգներով բոլորովին նորություն էր մեր գրականության մեջ: Ալաջաջյանի ստեղծագործությունները իրենց դասական կատարելությամբ, կերպարների բացահայտման յուրահատուկ մեկնաբանությամբ, գեղարվեստական արժանիքներով գնահատվեց թե՛ գրաքննադատների, թե՛ ընթերցողների կողմից:

Նրա ստեղծագործական աշխարհում հրաշալի վեպերի ու վիպակների կողքին, իրենց արժանավոր տեղն են զբաղեցնում պատմվածքները:

Տարիների ընթացքում Ալաջաջյանի պատմվածքները լույս են տեսնում հայկական տարբեր ամսագրերում, ժողովածուներում, իսկ մի մասն էլ սևագիր և ձեռագիր վիճակում ի մի բերելով, հավաքելով, նրա զավակները՝ որդին Ջոհրաբը և դուստրը Թերեզը Հայաստանից ԱՄՆ են փոխադրում և իրենց հովանավորությամբ լույս են ընծայում 2006 թվականին: Գիրքը բացվում է «Ձոն իմ երկրին» նախաբանով, որտեղ հեղինակը խոսում է իր հինավուրց երկրի, իր սիրասուն ժողովրդի, նրա պատմական ճակատագրի, տարագիր հայի անորոշ ապագայի մասին, բայց միաժամանակ հավատում ու ակնկալում՝ բոլոր հայերի վերադարձը հայրենիք, քանզի . «Ամեն ծաղիկ իր բույրն ունի, ամեն ծաղիկ իր հողն ունի: Օտար հողում չի աճի մեր հայրենի ծաղիկը, ուրիշ է նա, արև կա վրան, իմ երկրի միջօրեի տաք արևը: Սրտառուչ մի կանչ է իմ երկրի երգը, որտեղ կանչում են թփերը, կանչում են լեռները, կանչ է ամեն մի քար: Մեզ կանչող հողն է իմ երկիրը, որ հայրենիք է կոչվում»:<sup>1</sup>

1.Ստ.Ալաջաջյան, Պատմվածքներ, Կալիֆորնիա, 2006թ, էջ 4:

Ալաջաջյանի պատմվածքները նման են դիմանկարների, որոնցից ամեն մեկը, եղեռն ապրած ականատեսի կամ նրա ժառանգների, խաթարված ճակատագրի, հոգեբանական ծանր իրավիճակի նկարագրություն է: Պատմվածքները կառուցվածքային իմաստով նույնպես նման են իրար, ստեղծված են նույն սկզբունքով: Հերոսները տարագիր հայեր են, որոնց հանգիստ չեն տալիս եղեռնի ահասարսուռ հիշողությունները, կորուստները, անվերադարձ թողած հայրենի տունը: Արտաքուստ թվում է, թե նրանք ապրում են իրենց սովորական առօրյա կյանքով, մանրմունք խնդիրներով, գլխիկոր տանում են իրենց բաժին հասած ճակատագիրը, բայց խորանալով յուրաքանչյուրի կյանքի մանրամասների մեջ, նկատում ես հերոսի անցյալն ու ներկան խաչաձևող ողբերգական էջերը, որոնք երբևէ չեն լքում նրանց քանգի նրանց կյանքը, կարծես, անորոշության կծիկ է, անհեռանկար՝ պատված մռայլ ու գորշ գույներով: Իրար են հաջորդում պատմվածքները և ներկայացնում յուրաքանչյուր կերպարի հիշողության ծալքերում պահպանված անցյալի պատառիկները, հեռվում թողած հայրենիքի վերհուշը, որոնք ապրեցնում են նրանց, լցնում նրանց էությունը, որովհետև առանց այդ անցյալի, նրանք թերի են, լքված ու ունայն, բոլորին միացնում է օտարության մեջ, հայրենիքից հեռու ապրելու ծանր ապրումները:

<<Մայրիկի համար>>,<<Գուրգուրանք>>,<<Կալենի տղան>>,<<Մոր աչքերը>>, <<Տալիք>>, <<Անունը>> . այս բոլոր պատմվածքների հերոսների կենսագրության մեջ խտացված է ոչ միայն մեկ սերնդի, այլև նրանց ժառանգների անցած կյանքի ուղին: Հեղինակին զբաղեցնող խնդիրները շատ են, որ դառնում են պատմվածքների թեման, բայց գլխավորը մարդն է՝ մարդկային զգացմունքների խորհուրդը՝ իր տառապանքով, հիասթափությամբ, աշխարհընկալմամբ, սիրո յուրահատուկ դրսևորումներով, անկեղծությամբ, իսկ հերոսների բոլոր քայլերին ոչ միայն աչալուրջ հետևում է արձակագիրը, այլ քննում ու մասնակից է դառնում նրանց հոգեվիճակին, իր վերաբերմունքը, հույզերը խառնում նյութի հյուսվածքին: Ալաջաջյանը խորապես հասկանում էր, որ հայերը որոնք գաղթել էին հայրենի եզերքից, իրենց մեջ պահպանել էին այն բարքերն ու սովորույթները, տոհմիկ ավանդույթները, որ ժառանգել էին նախնիներից և այդ ամենը ցանկանում էին տեսնել իրենց զավակների մեջ: Ասվածի վառ վկայությունը հաստատում էին գրողի ծնողները՝ Եղիան և Թերեզան իրենց ապրելակերպով, թեկուզ օտարության մեջ, բայց ամեն գնով ընտանիքում փորձում էին հարազատ մնալ արմատներին, պահպանել ազգային նկարագիրը, զավակների մեջ սերմանել հայրենիքի, հոգևոր արժեքների, դարերով եկած ավանդույթների հանդեպ սեր ու նվիրվածություն:

Գրողի որոնումների ու նախասիրությունների կիզակետը՝ մարդ-հայրենիք փոխհարաբերությունն է, մարդկային հոգեբանությունը, անհատի ներաշխարհը: Նա հոգեբան-արվեստագետի քննախույզ հայացքով վերարտադրում է հերոսների հոգում կատարվող ալեկոծությունը: Հարցազրույցներից մեկի ժամանակ (<<Շրջապատ>>, 1993, թիվ 7), Ալաջաջյանն անկեղծորեն խոստովանել է, որ նախընտրում է հոգեբանական արձակը, երբ մարդ անհատը ձգտում է ազատության, ինքնուրույնության, արդեն իսկ դրա շեմին է, մնում է դրսևորելու հնարներ գտնել>>: Հեռավոր անցյալն ու ներկան միավորող տխուր հիշողությունների, հոգեբանական նրբագծերով է քննվում <<Մոր աչքերը>> պատմվածքը: Այնքան սպասված, բաղձալի հանդիպումը, հավանաբար այդպես էլ չկայանար, եթե ճակատագիրը չժպտար նրանց: Բայց այդ հանդիպման արանքում շուրջ քառասուն տարի է անցել, որի շուրջ էլ ծավալվում են հերոսների մտատանջությունները, բազմաթիվ հարցեր, որոնց մեջ խճճվել են նրանք: Ինչպե՞ս ճանաչել միմյանց, յուրաքանչյուրին տանջում է այդ միտքը:

Որդին երևակայությամբ ուրվագծում է մոր դեմքը, մտովի կնճիռներ ավելացնում նրա երիտասարդ նկարի վրա, և հուսահատության վերջին ճիգով փորձում է ամբոխի մեջ հարազատ

դեմք գտնել, իսկ մայրը վստահում է իր սրտի ձայնին, նա համոզված է, որ արյան կանչը հուսախաբ չի անի իրեն.<<Արյունը շրջապատի մեջ մազնիսի պես քաշում, դեպ իրեն է ձգում, որ իրենը պետք է լինի, այն, որ անջատվել է իրենից: Արյունը կանչում է, այդ կանչը հզոր է, ակեղ, լցնում է իր ամբողջ աշխարհը>>:1

Ալաջաջյանը հերոսի հուշ-մտորումների միջոցով բացահայտում է նրա անցած կյանքի ճանապարհը, լուռ բողոքը ճակատագրի հանդեպ, իր բազում անունները, որոնց մեջ իր ամբողջական կենսագրությունն է, ամեն մի անվան մեջ իր տեսած երկիրը: Եվ ով է պատասխան տալու հայրենի հողը կորցրած, անվախճան տարագրության ճամփան բռնած՝ հայության բեկորների խեղված ճակատագրի համար, նրանց չմարող կարոտների ու չիրականացած երազների համար:

Մեղմ բնութագրումների միջոցով Ալաջաջյանը նկարագրում է եղեռն տեսած մարդկանց դառը ողբերգությունը: Հոգեբանական գեղեցիկ անցումներով ողողված մի պատմվածք է <<Գուրգուրանքը>>: Հեղինակը վերհուշի միջոցով ներկայացնում է մի հուզիչ միջադեպ, որը ողջ կյանքում ստիպում է Միհրանին մեղավոր զգալ կնոջ առջև: Հերոսները պաշարված Ջեյթունից հեռացած հայեր են, որոնք արդեն հաստատվել են հարազատ հողում, դարձել մեծ գերդաստանի տեր, բայց անցյալի ծանր հիշողությունը՝ ամուսիններին դարձրել է ավելի հոգատար ու ուշադիր միմյանց հանդեպ, նոր իմաստավորում է հաղորդել նրանց կյանքին:

Հոգեբանական սքանչելի դիտարկումները դրվագ առ դրվագ ավելի են ամբողջացնում Միհրանի փառաքշանքը, սիրո ինքնաբուխ պոռթկումները, որոնք շատ անգամ ծիծաղելի են դառնում շրջապատի համար, բայց նա այդ գուրգուրանքների միջոցով ուզում է թոթափել մեղքի զգացումը, մոռացության տալ այն չարաբաստիկ վայրկյանը, որը ճակատագրական կլիներ թե՛ կնոջ, թե՛ իր համար: Միհրանի հոգեբանական ու բարոյահոգեբանական բազմաձև վախճանային մեջ, ճշգրտվում էր գրողի բուն ասելիքը, անցյալը ներկային, վերհուշը իրականությանը կապելու փորձն ու հմտությունը:

Գրողի խնդիրը միայն ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների նկարագրությունը չէր, այլ այդ իրադարձությունների ֆոնի տակ քննել անհատի հոգեբանությունը, նրա ներաշխարհը, սոցիալական և բարոյական տասնյակ խնդիրներ: <<Կետը>> պատմվածքում Ալաջաջյանը խտացված գույներով շարադրում է բեղավոր մարդու կյանքի տխուր փուլերը: Գլխավոր հերոսը բախտի կամոք հայտնվել է անապատի ավազուտներում, ուր իր կյանքի տասնութ տարիներն է անց կացրել և գրանցում է անցուդարձ անող մեքենաների, ուղևորների թիվը... Ինչ որ տեղ մեռնում է ընտանիքը, իսկ ինքը միայնության ու անորոշության մեջ սպանում է իր օրերը:

Այս ամենին գումարվում ավագ որդուց ստացած սրտաճմլիկ նամակը, որը հայ մարդու տառապանքով կնքված վկայագիր է: Նրա կյանքը դժվարությունների շղթա է, որ իր մեջ ներառում է եղեռն, գաղթ, հարազատների կորուստ, պանդխտություն: Կետի կայարանապետը կռիվ է տալիս ինքն իր հետ, մտածում արդյոք արժե ապրել և հանուն ինչի... Ալաջաջյանի պատմվածքներում նկատելի է հեղինակի շունչը, մտահոգությունը իր հերոսների ճակատագրի, վաղվա օրվա հանդեպ, հայապահպանման խնդիրը որքան էլ դժվարին, բայց առաջնային է նրա կերտած կերպարների համար:

1.Ստ.Ալաջաջյան, Պատվածքներ, Կալիֆորնիա, 2006 թ, էջ 29:

Ճակատագրի ընկերներ են Թումասն ու Մարկը (<<Մայրիկի համար>>), որոնք հայտնվել են Մադագասկարի Կոմորեզ կղզում: Երբ նրանք երկուսով են, խոսելու շատ բան կա, գիտեն, որ անցյալ են ունեցել, որ իրենց ետևում կա մի ժողովուրդ, հեռու-հեռվում պետականություն ունեն, բայց երբ հեռանում են միմյանցից դառնում են օտար թե՛ իրենց, թե՛ շրջապատի համար՝ առանց անցյալի, իսկ իբրև ահազանգ հնչող Մարկի խոսքերը Թումասի ականջին. <<Դու կմոռանաս հայայությունդ>>, քանզի իտալացի կնոջդ հետ զրուցելու քիչ բան կա, իսկ որդուդ հետ նույնպես հետաքրքիր չէ, նրա աշխարհն ուրիշ է:

Թումասի տրամադրությանը բնորոշ <<Մի թախիծ է նստել հոգում>> հեղինակային բնութագրումը ոչ թե պահի զգացած ապրում է, այլ ընդհանրացնում է <<առանց հայրենիք>> ապրող հայերի ներքին խռովքն ու կարոտը, ուժացման տազնապը:

<<Կալենի տղան>> պատմվածքի հիմքում ընկած է գաղթական մի ընտանիքի տխուր պատմությունը: Սարոյանական հարազատ մի նրբերանգ կա այնտեղ, պատահական չէ, որ Ալաջաջյանի թարգմանությամբ հայ ընթերցողը ծանոթացավ մեծանուն գրողի <<Ձեր կյանքի ժամանակը>> ստեղծագործությանը:

Առաջին հայացքից սովորական ընտանիք՝ իր կենցաղով, գոտություններով:

Գրողը հակիրճ բնութագրումների միջոցով ներկայացնում է մարդկային թշվառությունը. տարագիր ընտանիք, որի համար օրն սկսվում և ավարտվում է մշտական սղոցող վեճերով. << հոր համար ամեն մի երեկոն մի մեծ թաս օղի է>>, բայց դա նաև իր բացատրությունն ունի. << Տխուր մարդ է հայրիկը, ոչ միայն այն պատճառով, որ լքել է ծննդավայրը, այսինքն՝ չեն թողել, որ այնտեղ ապրի, այլ նաև մի ուրիշ երկրից թշվառության պատճառով դուրս գալուց և այստեղ՝ լեզուն չիմանալուց և հեռանկար չտեսնելուց>>, իսկ մոր և որդու վեճերի առիթը հարևանի որդի Կալենի տղան է՝ Էնրիկոն, այդ հարուստի որդին, միշտ կոկիկ, միշտ արդուկված>>, ինչպես նրան անվանում են բակի երեխաները, որոնց տանը մայրը՝ ստիպված էր լվացք անելով, օրվա հացը վաստակել: Էնրիկոն ակամայից դարձել է այս ընտանիքի մի մասնիկը: Նրա հասցեին շոայլված մոր գովեստների շարանը, անթաքույց համակրանքը, անվերջ հարազատ տղայի հետ հակադրելը, հունից հանում էին Արամին, տարիների հետ կուտակվում էր վրեժխնդրության զգացումը, ասելությունը կրծում էր կոկորդը և սպասում պատեհ առիթի, որ Էնրիկոն պատասխան տա իրեն պատճառած տառապանքների համար:

Գրողն այնքան համոզիչ փաստարկներով է ներկայացնում իր հերոսի հոգեվիճակը, ապրումները, և երբ արդեն մոտ էր Արամի հաղթանակը, զոհն այնքան խեղճ ու անօգնական է երևում նրա աչքին, նա անգամ պատկերացում չունի, թե որքան ատելի է և ոչնչով մեղավոր չէ, որ հայտնվել է նման կարգավիճակում:

Արամի մեջ խիղճն է արթանանում և նա փրկելով տղային ջրի պիլքներից՝ արժանանում է Էնրիկոյի մոր երախտագիտությանը:

Ալաջաջյանը հետաքրքիր լուծում է տալիս. << Արամը մոր աչքին ներկայանում է այլ կերպարով, հպարտ ու ազնիվ, իսկ Էնրիկոյի անունը իսպառ չի հնչում նրանց տանը>>:

Պատմվածքների շարքում իր յուրահատուկ տեղն ունի <<Վերջին նավը>>: Գրողը հյուսում է մի երիտասարդ գույզի կյանքի պատմությունը: Այնքան սեր ու նվիրում կա միմյանց հանդեպ: Մեղան երախտագիտության զգացումով է մտաբերում իր ամուսնու՝ Պետրոսի կերպարը, երջանկությունը հորդում է նրա աչքերից: Բայց կյանքն այնքան անկանխատեսելի է: Մեկ վայրկյանում կարող էս հասկանալ, որ մարդուն ճանաչելը անչափ դժվար է, վտանգը, օրհասական պահը կարող է բացահայտել դիմացինիդ բուն էությունը:

Կողին պաշարման մեջ է և դեպքերն այնպես են զարգանում, որ վերջին նավում նավապետի առաջարկած մեկ տեղի համար Պետրոսը թախանձագին խնդրում է իրեն զիջել առաջնությունը՝ փոխարենը իր ամբողջ հարստությունը, զարդերը: Հարվածն այնքան ծանր էր, որ բթացրել է կնոջ հոգին, տակնուվրա արել նրա էությունը: Նրա ականջին ողջ ուղևորության ժամանակ լսվում էր նավապետի՝ ամուսնու հասցեին իջեցրած <<բվեճ>> բառը:

Պատմվածքն անսպասելի ավարտ ունի, բայց իմաստավորված: Երբ ժամանակները խաղաղվում են, թշվառական ամուսինը գնում է կնոջ հետքերով: Հիասթափությունն այնքան խորն էր, որ ոչ մի ներում չէր կարող մեղմացնել կնոջ վիշտը, նա կայացրել էր ամենաճիշտ որոշումը. <<Դուրը փակվեց: Դա փայտե մի դուռ էր, հասարակ, բայց պողպատե ամրությամբ, բաժանում էր երկու կյանք: Պետրոսը մնաց դրսում, Սեդան՝ ներսում>>:

Հեղինակն այնքան լավ է հասկանում կանացի վիրավորանքը, կոտրված սրտի անփարատելի ցավը, խորտակված հավատն ու սերը: Ամեն ինչ խաբկանք էր, թվացյալ երջանկություն:

Ողբերգական խտացված գույներով շաղախված, մեծ եղեռնի տպավորություններից հառնող մի զարհուրելի պատմություն է << Տալիքը>>: Արձակագրի գրչի ներքո ուրվագծվում է Տատուրի կերպարը, որը տաս տարեկան հասակում ճաշակում է վախի, տառապանքի ծանր զգացողությունը, հիշողության մեջ ընդմիջը դրոշմելով անհասարատ մի տեսարան՝ դիակներով, արնաշաղախ դեմքերով լցված մի զարհուրելի փոս, չորս բոլորը տնքոց ու հեծկլտոց, հավերժ թագավորում էր խավարը: Հրաշքով փրկված տղան, արևի ճառագայթների ուղեկցությամբ դուրս սողոսկելով փոսից, ընդմիջտ աստեց մույթը, խավարը, աստեց այն աստիճան, որ իր երեկոները չէր պատկերացնում առանց ճրագի:

Արևը դարձավ նրա կյանքի խորհրդանիշը, սերը, լույսը: Այնտեղ, այն ստորգետնյա փոսում նա կորցրել էր մորը, իր մանկությունը, իր անցյալը, ամեն ինչ: Ապրում էր Տատուրը անձանոթ երկրում, խորթացած աշխարհին ու մարդկանց: Միակ գրուցակիցը՝ ազգությամբ հայ Պատրիկն էր. <<սպասված բեկոր ու հարևան>>, երկուսն էլ յուրովի դժբախտ էին: Այս համընդհանուր գորշության մեջ նրա կյանքը մի ակնթարթ զարդարեց այն որբ, արևախանձ աղջիկը, բայց որին կորցնելուց կյանքն իմաստավորվեց:

Տատուրի կերպարը առեղծվածային է բոլորի համար՝ աշխարհից խռոված, ինքնամփոփ, չհասկացված, կյանքի հետ կապող բոլոր կամուրջները այրվել են նրա համար:

Ալաջաջյանը յուրաքանչյուր հերոսի մոտենում է յուրովի, բացահայտում նրա հոգում անթեղված այն փոքրիկ բռնկումները, որոնք այդպես էլ մնում են անկատար՝ օտար միջավայրում:

Ալաջաջյանն ազգային գրականության յուրահատուկ կողմերն առանձնացնող գրողներից էր, որն իր հերոսների՝ աշխարհով մեկ սփռված հայության բեկորների հետ տառապում էր, կիսում նրանց բաժին հասած վիշտն ու տառապանքը և երբեք չէր կորցնում լաավտեսությունը: Թեկուզ օտարության մեջ պետք է պահպանել ազգային նկարագիրն ու չհանձնվել ճակատագրին:

<<Հայ սփյուռք , -մի առիթով գրել է արձակագիրը,- հայ ազգության հզոր մեկ միավորն է՝ չմեռնող, մշտապես ապրող: Պարզ է, որ տարիների ընթացքում ոմանք կծուլանան, ոմանք կմեկուսանան հայ կյանքից՝ ընկնելով կատարելապես օտար շրջանակների մեջ, բայց այդ բոլորը << ոմանք>> են... Հիմնական ազգային համայնքը կմնա, կմնա հոծը, այն որ գիտակցում է հայ լինելը, չի որոնում իր ծագումը, սիրում է հայրենիքը, լեզուն, կրոնը, ավանդույթները՝ պահպանելով դրանք>>:

1. <<Շրջապատ>>, 1993, թիվ 7: